

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/5

15 հունվարի 2016 թ.

Քննարկվեց «Արևիկ Կատինյան» ՍՊԸ 15.12.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 16.11.2015 թ-ի թիվ 6110205 ակտի դեմ:

«Արևիկ Կատինյան» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Արևիկ Կատինյան» ՍՊԸ (այսուհետ նաև Ընկերություն) հայտնում է, որ Վանաձորի ՏՀՏ կողմից ընկերությանը պատկանող դեղատանը կատարվել է դրոշմապիտակների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում կազմված 16.11.2015 թ-ի թիվ 6110205 ակտի հետ ընկերությունը համաձայն չէ, հետևյալ պատճառաբանությամբ:

2015 թ-ի օգոստոսի 24-ին ընկերության կողմից սահմանված կարգով Վանաձորի ՏՀՏ Տաշիրի սպասարկման կենտրոն է ներկայացվել դրոշմապիտակների ստացման վերաբերյալ գրավոր հայտ, որտեղ ընկերությանը խորհուրդ է տրվել հետագա քայլերի վերաբերյալ կապ հաստատել ընկերությանը սպասարկող հարկային տեսուչի հետ, ինչը և արվել է: Արդյունքում ընկերությանը սպասարկող հարկային տեսուչը հայտնել է, որ մինչև ընկերության կողմից ներկայացված ցուցակին համապատասխան ստուգում չկատարվի, էլեկտրոնային եղանակով դրոշմապիտակների ստացման հայտ ներկայացնելու իրավունք ընկերությունը չունի: Այնուհետև ընկերության ներկայացուցիչը պարբերաբար կապ է հաստատել ընկերությանը սպասարկող հարկային տեսուչի հետ, սակայն որևէ ստույգ տեղեկություն հանրավոր չի եղել ստանալ:

2015 թ-ի սեպտեմբերի 2-ին ընկերությանը սպասարկող հարկային տեսուչը հայտնել է, որ ստուգում չի իրականացվելու և ընկերությունը կարող է ներկայացնել հիշատակված հայտը և բանկում վճարել համապատասխան գումարը: Նույն օրն ընկերությունը էլեկտրոնային եղանակով ներկայացրել է դրոշմապիտակների ստացման հայտը և բանկի միջոցով վճարել համապատասխան գումարը, որից հետո հարկային տեսուչից ճշտվել է, թե երբ է հասնելու դրոշմապիտակներ ստանալու ընկերության հերթը: Տեսուչը պատասխանել է, որ գոյացել են հերթեր և ընկերության հերթը հասնելուն պես ընկերության ներկայացուցիչները կիրավիրվեն դրոշմապիտակ ստանալու, սակայն մինչ օրս ընկերության հերթը այդպես էլ չի հասել, իսկ հայտն էլ մերժվել է:

Դրանից հետո, համաձայն Վանաձորի ՏՀՏ պետի 16.10.2015թ-ի հանձնարարագրի, ընկերությունում իրականացվել է հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում կազմվել է վերոգրյալ ակտը:

Ելնելով վերոգրյալից, ընկերությունը խնդրում է տեղի ունեցածի վերաբերյալ կատարել քննություն և մեղավոր հարկային տեսուչին անփութության պատճառով ենթարկել պատասխանատվության՝ մինևնույն ժամանակ ստուգման արդյունքում կազմված ակտը թողնել անկատար և դրա կապակցությամբ կայացնել համապատասխան որոշում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ռաուանասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 16.10.2015 թ-ի թիվ 6110205 հանձնարարագրի համաձայն «Արևիկ Կատինյան» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 16.11.2015 թ-ի թիվ 6110205 ակտը (այսուհետ նաև Ակտ):

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ «Արևիկ Կատինյան» ՍՊԸ-ին պատկանող Ստեփանավան, Բաղրամյան 6 հասցեում գործող դեղատնից 21.10.2015 թ-ին ժամը 12:05-ի սահմաններում հարկային տեսուչ Գագիկ Գալստյանի կողմից գնվել է 3401 ծածկագրին դասվող չդրոշմապիտակավորված թվով 1 հատ լոգանքի գել՝ «Մալենկայա ֆեյա» 1300 դրամ արժեքով: Իրականացված հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգմամբ պարզվել է, որ «Արևիկ Կատինյան» ՍՊԸ-ի կողմից խախտվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2 հոդվածի պահանջները, որի համաձայն ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված շալցված, փաթեթավորված կամ ցանկացած այլ ձևով տարայավորված նույն հոդվածով ներկայացված աղյուսակում ներառված ապրանքների վրա օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե օրենքով սահմանված համապատասխան ծածկագրով ապրանքային դիրքում ընդգրկվող ապրանքները կամ այլ փաթեթավորողի կողմից փաթեթավորված (չափածրարված) շալցված կամ այլ կերպ տարայավորված են նույն փաթեթավորմամբ ու ապրանքային տեսքով, առանց քաշը (ծավալը) փոփոխելու, մանրաձախ առևտրի ոլորտում իրացման համար:

Մինչև Ակտով արձանագրված խախտմանն անդրադառնալը հարկ է նշել, որ 2015 թ-ի օգոստոսի 24-ին ընկերության կողմից Վանաձորի ՏՀՏ Տաշիրի սպասարկման կենտրոն է ներկայացվել դրոշմապիտակների ստացման վերաբերյալ գրավոր հայտ, որը սահմանված կարգով ընդունվել է: Հայտը ներկայացնողի հարցին, թե որոնք են լինելու դրոշմապիտակներ ստանալուն ուղղված հետագա քայլերը, Տաշիրի սպասարկման կենտրոնում պատասխանել են, որ անհրաժեշտ է կապ հաստատել տարածքը սպասարկող հարկային տեսուչի հետ, որն այդ ամենի մասին կտեղեկացնի: Ընկերության ներկայացուցիչը բազմիցս կապ է հաստատել տարածքը սպասարկող տեսուչի հետ, որը, սակայն, որևէ ստույգ տեղեկություն չի հայտնել: Միայն 2015 թ-ի սեպտեմբերի 2-ին է ընկերությանը տեղեկացվել, որ անհրաժեշտ է ներկայացնել դրոշմապիտակների ստացման էլեկտրոնային հայտ և վճարել համապատասխան գումարը: Նույն օրն ընկերությունը էլեկտրոնային եղանակով ներկայացրել է դրոշմապիտակների ստացման հայտը և բանկի միջոցով վճարել համապատասխան գումարը: Սակայն ընկերության հայտը մերժվել է, որի հետևանքով ընկերությունը զրկվել է սահմանված կարգով դրոշմապիտակներ ստանալու հնարավորությունից:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն. «Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա վարչական մարմինը

դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին»:

Քննարկվող դեպքում 2015 թ-ի օգոստոսի 24-ին ընկերության կողմից Վանաձորի ՏՏՏ Տաշիրի սպասարկման կենտրոն է ներկայացվել դրոշմապիտակների ստացման վերաբերյալ գրավոր հայտ: Սակայն, Վանաձորի ՏՏՏ Տաշիրի սպասարկման կենտրոնում փոխարենը դիմումատուին տեղեկացնելու, որ դրոշմապիտակների ստացման հայտը ներկայացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով, ընկերությունից ընդունվել է դրոշմապիտակների ստացման գրավոր հայտը: Ընդ որում, գրավոր հայտն ընդունվելուց հետո, դրան որևէ ընթացք չի տրվել:

Վերոգրյալից, ըստ էության, հետևում է, որ հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձանց կողմից իրենց պարտականությունների կատարման մեջ թերանալու հետևանքով ընկերությունը զրկվել է սահմանված կարգով և ժամկետներում անհրաժեշտ քանակի դրոշմապիտակներ ձեռք բերելու և ընկերության բնականոն աշխատանքը կազմակերպելու հնարավորությունից, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Ակտով արձանագրված խախտմանը: Այսինքն, գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ հարկային մարմնի պաշտոնատար անձանց անգործությունը հանգեցրել է ընկերության նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների առաջացմանը, ինչն իրավաչափ չէ և չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՏՏ 16.11.2015 թ-ի թիվ 6110205 ակտի 1-ին կետը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ